ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«08» մայիսի 2025թ. № 387

ՌՈՒԲԵՆ ՇՎԵՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, հաշվի առնելով, որ անհնարին է Ռուբեն Շվերնիկի Հարությունյանի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԼԴ4/0043/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը՝ ***որոշում եմ.***

1. Ռուբեն Շվերնիկի Հարությունյանի 2025 թվականի ապրիլի 10-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբեն Շվերնիկի Հարությունյանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. մայիսի 8
ք. Սպիտակ